

9464

Վ. ՄԱԼՈՏՈՎ

VI ԿՈՆԳՐԵՍՍԸ

3ԵՎ

ՊԱՅՔԱՐ

ԿՈՄՄՈՒՆԻՉՄԻ ՀԱՄԱՐ



3 K 11

Մ-86

ՄԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՈՒՆ  
ԹԵՐԵՎԱՆ-1928

25 SEP 2006

1 DEC 2009

Վ. ՄԱՆՆՈՎ

3KH  
Մ-86 4

119

VI ԿՈՆԳՐԵՍՍԸ

ՅԵՎ

Պ Ա Յ Ք Ա Ր

ԿՈՄՄՈՒՆԻՉՄԻ ՀԱՄԱՐ



7217-57

~~1198~~  
986

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1928

04 JUL 2013

8 2 REF 5000

1 DEC 2008

9464

10859

4796-91

Պետհրատի 2-րդ տպարան, Յերևանում

Գրառ. № 1058 ք.

Տիր. 2000

Հրատ. № 870

Պատվեր № 1284

Ընկերներ, Կոմմունիստական Խնտերնացիոնալի VI կոնգրեսի աշխատանքը կոմմունիստական շարժման զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի: Կոնգրեսի աշխատանքի նշանակության մասին ամենից առաջ վկայում է հենց նրա որակարգը: Կոնգրեսը քննության առավ և վորոշումներ ընդունեց վոչ միայն միջազգային դրություն վերաբերյալ հիմնական խնդիրների մասին, այլև տվեց մի փաստաթուղթ, վորի մեջ պարզորոշ գծված են պրոլետարական պայքարի յերկարատև պերսպեկտիվները, այն է՝ Կոմմունիստական Խնտերնացիոնալի ծրագիրը: Բացի դրանից կոնգրեսը կարևորագույն վորոշումներ ընդունեց իմպերիալիստական պատերազմների վտանգի դեմ պայքարելու միջոցների, գաղութների հեղափոխական շարժման խնդիրների և, վերջապես, ԽՍՀՄ-ի և Համկոմկուսի (ք) դրության մասին:

Պետք է հենց սկզբից ասեմ, վոր կոնգրեսի արդյունքներին վերաբերող այս զեկուցման մեջ անհնարին է շարադրել նրա ամենահիմնական վորոշումներն անգամ: Յես ստիպված եմ իմ ուշադրությունը կենտրոնացնել այնպիսի մոմենտների վրա, վորոնք կոնգրեսի աշխատանքների ընդհանուր բնութագիրը չեն տալիս: Բնական է, վոր լես առանձին ուշադրություն պետք է նվիրեմ ծրագրին, ինչպես նաև այն վորոշումներին, վորոնք տալիս են ընթացիկ մոմենտի գնահատական

նը՝ միջազգային հարաբերությունների զարգացման տեսակետից և վորոնք վորոշում են Կոմինտերնի քաղաքական գիծն առաջիկա շրջանի վերաբերմամբ:

Բայց նախապես անհրաժեշտ և տալ նրա՝ կոնգրեսի թեկուզ ամենաընդհանուր բնութագիրը:

Կոնգրեսի կազմն արդեն ինքնին արտահայտում էր միջազգային կոմունիստական շարժման աճումը: Յեթե հիմնված էր կոնգրեսին ներկա էին 49 կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչներ, ապա այս կոնգրեսին կային 58 կոմկուսակցությունների ներկայացուցիչներ, այսինքն՝ 9 կոմունիստական սեկցիայով ավելի: Բայց առանձնապես կարևոր և այն փաստը, վոր այս անգամ կոնգրեսի աշխատանքներին ամենակտիվ մասնակցություն ունեցան ավելի շատ կոմկուսակցությունների պատգամավորները: Յե՛վ այդ արտահայտվեց թե պլենար նիստերում և թե՛ դեռ ավելի մեծ չափով՝ կոնգրեսի հանձնաժողովների աշխատանքներում: Կոնգրեսի զեկուցողների կազմն ինքնին վկայում է, վոր շատ կուսակցություններ ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին կոնգրեսի աշխատանքներում: Հայտնի չե՛, վոր ընկ. Բուխարինի հետ միասին—վորը զեկուցում ավելի միջազգային դրություն ընդհանուր խնդիրների և Կոմինտերնի ծրագրի մասին—հանդես չեկան Կոմինտերնի հիմնական սեկցիաների հետ կապված մի շարք ընկերներ, վորոնք զեկուցումներ և հարակից զեկուցումներ ավելի պատերազմի և զաղութային հարցերի մասին: Այսպես, պատերազմի հարցի շուրջը, գլխավոր զեկուցող ընկ. Բելլից (Անգլիա) բացի, հարակից զեկուցումներով հանդես չեկան ընկ. ընկ. Բարրեն

(Ֆրանսիա), Շնեյկերը (Գերմանիա), Լովստոնը (Միացյալ Նահանգներ): Գաղութային հարցի շուրջը, բացի հիմնական զեկուցող ընկ. Կուուսինենից (Ֆինլանդիա), վորպես հարակից զեկուցողներ հանդես չեկան ընկ. ընկ. Երկոլին (Իտալիա), Ստրախովը (Չինաստան), Սիկանդերը (Հնդկաստան), Եմբեր-Դրոն (Շվեյցարիա): Համկոմկուսի (բ) և ԽՍՀՄ-ի հարցի մասին զեկուցողներ էին ընկ. ընկ. Վարզան և Մանուիլսկին: Միայն զեկուցողների թվարկումը վկայում է, վոր այդտեղ ներկայացված էր բոլոր հիմնական կոմունիստական կուսակցությունների փորձը, իսկ բացի դրանից, նույն այդ մտքով, կարևոր նշանակություն ունի այն փաստը, վոր պատգամավորների ակտիվ մասնակցությունը զեկուցումների քննության և վորոշումների մշակման գործում այս անգամ առանձնապես խոշոր թափ ստացավ: Կոմինտերնի կոլլեկտիվ աշխատանքի բնույթը չերևում է նաև այն բանից, վոր ծրագրի սկզբնական նախագծի մեջ, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, մտցված էր մոտավորապես հազար խոշոր ու մանր զրավոր ուղղում և փոփոխություն (թեպեև դրանց մի մասը մտցված էր կուսանդամների կողմից, վորոնք չեյին մանուկ կոնգրեսի պատգամավորների կազմի մեջ): Այդ ուղղումները հնարավորություն ավելին մի շարք ելական լրացումներ և մասամբ փոփոխություններ մտցնելու ծրագրի նախնական տեքստի մեջ, վորի հետևանքով և ծրագրի, անստորակույս, զգալապես բարելավվեց:

Կոնգրեսում աշխուժ դիսկուսիա տեղի ունեցավ մի շարք խոշոր հարցերի շուրջը: Այսպես, կանգ առ-

նելով միայն առանձին խոշոր սրինակների վրա, կարելի չի հիշատակել հետևյալ նյութերը, վորոնք դիակոսսիայի առարկա դարձան. ծրագրի առթիվ խոսք չկալով ֆինանսական կապիտալի դերի, ռեֆորմիզմի սոցիալական հիմունքների, ֆաշիզմի բնույթի, բուրժուազեմոկրատական հեղափոխությունների հեռանկարների, պրոլետարիատի դիկտատուրային անցնելու հնարավորությունների տեսակետից չերկրներն առանձին հիմնական տիպերի (տեսակների) բաժանելու, նեպի և ռազմական կոմունիզմի և այլ խնդիրները մասին: Միջազգային գրությունը և կոմինտերնի հերթական խնդիրները քննելիս հատուկ ուշադրություն նվիրվեց հետպատերազմյան կապիտալիզմի զարգացման «չերթորդ շրջանի» հարցին և իմպերիալիստական պետությունների ներքին և արտաքին հակասությունների հարցին՝ պատերազմական վտանգի խնդրի կապակցությամբ: Գաղութային հարցի քննումն առաջ քերեց մեծ դիակոսսիա այսպես կոչված «ապագադեթացման» թեորիայի և գաղութների ազգային բուրժուազիայի դերի շուրջը: Այդ հարցերի առթիվ չեղած դիակոսսիաների ելության վրա այստեղ անհնար է կանգ առնել: Սակայն պետք է նշել, վոր VI կոնգրեսի վորոշումների բնորոշ գլխը՝ նրանց միաձայն ընդունվելն է: Կոնգրեսի աշխատանքը տևեց մեկ և կես ամիս: Այդ աշխատանքի արդյունքներն են՝ բոլոր հարցերի շուրջն ընդունված միաձայն վորոշումները:

Ինչպես հայանի չե, կոնգրեսի հիմնական վորոշումներն արդեն հրատարակվել են մամուլում: Մոտակա սրերը կհրատարակվին մնացածները:

## 1. ԿՈՍՏՈՒՆԻՉՄԻ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

### 1. ԾՐԱԳԻՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ չես կանցնեմ կոնգրեսի այդ հիմնական վորոշումներին: Հասկանալի չե, վոր այդ վորոշումների մեջ առաջին տեղը գրավում է ծրագիրը:

Առաջին անգամն է, վոր կոմունիստական Ինտերնացիոնալը ընդունում է իր ծրագիրը:

Դա մի չերևույթ է, վորը բացառիկ կարևորություն ունի միջազգային բանվորական շարժման համար: Մինչ կոմինտերնի մյուս վորոշումները լուծում են տալիս միջազգային կոմունիզմի այս կամ այն հերթական խնդիրներին, կոմինտերնի ծրագիրը վորոշում է միջազգային կոմունիզմի՝ հանուն պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի մղվող հեղափոխական պայքարի ամբողջ դարաշրջանի համար ընդհանուր խնդիրները և հիմնական ուղիները: Մինչև ծրագիրն ընդունելը կոմունիստական Ինտերնացիոնալը սահմանափակվում էր այնպիսի վորոշումներով, վորոնք գծում էյին պրոլետարիատի պայքարի հեռանկարները, նկատի առնելով պրոլետարական հեղափոխության այս կամ այն սպեցիֆիկ խնդիրները կամ մոտակա շրջանի ընդհանուր խնդիրները: Իսկ ծրագիրը ընդունելը նշանակում է՝ միջազգային սոցիալիստական հեղափոխության ամբողջ դարաշրջանի համար հիմնական հեռանկարներ սահմանել:

Մարքսն ասել է, վոր միջազգային պրոլետարական հեղափոխության դարաշրջանն ընդգրկելու չի

մեկ և կեսից մինչև չերկու, և գուցե հինգ տասնամյակ (15, 20, 50 տարի քաղաքացիական և ազգամիջյան կոնֆլիկտ)։

Կոմմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումն արդեն նշանակում է, վոր համաշխարհային պատմութունը թևակոխել է նոր դարաշրջան։ Նրա սկիզբը դրվել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությամբ։ Հոկտեմբերյան հեղափոխությունն իբր հերթին խթան հանդիսացավ հեղափոխական շարժման ծավալման համար՝ մյուս յերկրներում և հեղափոխական վիթխարի խմորում առաջ բերեց գաղութներում։ Այդ դարաշրջանը, վոր սկսվել է 11 տարի առաջ, Կոմմունիստական Ինտերնացիոնալի առաջ գրեց մի արմատական խնդիր, այն է՝ գլխավորապես ընդհանրացնել 1917 թվի հոկտեմբերին սկսված միջազգային պրոլետարական հեղափոխության փորձը, նկատի առնելով ժամանակակից կապիտալիզմի դարգացման ընդհանուր վերլուծումը և կոմմունիզմի համար մղվող միջազգային պայքարի հիմնական հեռանկարները։ Ծրագիր ընդունելը նշանակում է, վոր այժմ մեր ձեռքին կա մի բոցավառ կիրոն, ավելի ճիշտ՝ մի վիթխարուժ պրոֆեկտոր, վորը լուսավորում է միջազգային պրոլետարական հեղափոխության ամբողջ դարաշրջանի գարգացման ընթացքը և հեռանկարները։ Կոմմունիստական Ինտերնացիոնալի ծրագրի ընդունելու փաստը խորհրդանշել է այն բանի, վոր մենք, իրոք, չերկու վտաքով կանգնած ենք այն դարաշրջանում, վորի անունն է՝ միջազգային սոցիալիստական հեղափոխության դարաշրջան։ Կոմինտերնի ծրագրի հաստատման փաստն ինքնին, վոր գիտականորեն ընդհանրաց-

նում է միջազգային բանվորական շարժման և գաղութների ճնշված ժողովուրդների հեղափոխական շարժման փորձը, նշանակում է, վոր կոմմունիզմն արդեն դարձել է այնպիսի միջազգային ուժ, վորը վստահորեն հարթում է իր գործնական և սկզբունքային ուղիները դեպի լիակատար հաղթանակ։

Մարդկության բովանդակ պատմության մեջ դեռ վոչ մի դասակարգ չի ունեցել գործողությունների միասնական միջազգային ծրագիր։ Դեռ վոչ մի դասակարգ մինչև այժմ ընդունակ էլ չի չեղել այդ բանին։ Միայն բանվոր դասակարգը, վորն իր գրոշի վրա դրել է հասարակության դասակարգային բաժանման սխտեմը վոչնչացնելու, այսինքն՝ դասակարգերը վոչնչացնելու պահանջը, վերջնապես մշակեց գործողությունների իր միջազգային ծրագիրը, մարդկային հասարակության կոմմունիստական վերակազմության համար մղվող պայքարի միջազգային ծրագիրը։ Անցյալում, սկսած համեմատաբար դեռ հեռավոր ժամանակներից, ասպարեզ ելին գալիս առանձին մեծ մարդիկ՝ իրենց ցնորք-ուտոպիաներով՝ վերակազմելու հասարակութունը «արդար», կոմմունիստական հիմունքներով։ Վորպես սրինակ մենք կարող եյինք հիշատակել XIX դարի առաջին կեսի նշանավոր սոցիալիստ-ուտոպիստների մի ամբողջ շարան։ Բայց այդ մարդիկ և նրանց շուրջը խմրված կողմնակիցներ չփոքրիկ աղանդները հնարավորութուն չունեին ստեղծելու մի այնպիսի բան, վոր նման լիներ՝ հասարակակարգը կոմմունիստական հիմունքներով վերակազմելու համար անհրաժեշտ գործողությունների ու պայքարի միջազգային ծրագրի։ Բայց Մարքս-Էն-

գելսի «Կոմմունիստական մանիֆեստով» արդեն սկիզբ դրվեց Կոմմունիստական Ինտերնացիոնալի ապագա ծրագրին: Յեւ միայն այժմ Կոմինտերնը կարողացավ տալ միջազգային կոմմունիզմի ծրագրի առաջին փորձը: Ունենալով այսուհետև Կոմինտերնի գիտականորեն հիմնավորված ծրագիրը, համաշխարհային պրոլետարիատը բաց է անում կոմմունիզմի համար մղվող իր պայքարի նոր, և այն ել կարևորագույն եջը:

Ինորոշ է, վոր և Ինտերնացիոնալը վոչ միայն չունի իր ծրագիրը, այլև չի յեղ գնում իր առաջ ալդ հարցը: Չնայած վոր առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը պարզորոշ ցույց տվեց, վոր ժամանակակից իմպերիալիզմի սխտեմի ներքին հակասությունների ամբողջ խորության ղեկքում իսկ կապիտալիստական սխտեմը դարգանում է միջազգային կապերի ամրապնդման ուղղությամբ, իսկ հետպատերազմյան շրջանն ել ավելի ընդգծեց համաշխարհային կապիտալիստական տնտեսության դարգացման փաստը, վորն ավելի և ավելի կապում է առանձին կապիտալիստական պետություններն իրար հետ և վոր, մյուս կողմից, պրոլետարիատի դասակարգային պայքարի դարգացումն առանձին յերկրներում ընդհուպ առաջադրեց միջազգային պրոլետարիատին մի շարք արմատական խնդիրներ լուծումը համաշխարհային մասշտաբով, — այսպես կոչված «սոցիալիստական» Ինտերնացիոնալը նույնիսկ խորում է Ինտերնացիոնալ ծրագիր մշակելու գաղափարից: Մինչ Կոմինտերնը վերջին հինգ տարվա ընթացքում նախապատրաստում էր իր ծրագիրը, և Ինտերնացիոնալը վոչ մի Ինտերնացիոնալ ծրագիր չունի և չի յեղ ցան-

կանում ունենալ: և Ինտերնացիոնալի բաղադրիչ մասերը՝ հանձինս ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների՝ աչնքան ամուր կերպով են կապվել «Իրենց» բուրժուազիայի հետ, վոր և Ինտերնացիոնալը նույնիսկ կարիք էլ չի զգում Ինտերնացիոնալ ծրագիր ունենալու: Իրանով և Ինտերնացիոնալը մի ավելորդ անգամ ապացուցում է, վոր նա բնավ պրոլետարական Ինտերնացիոնալ չի ներկայացնում իրենից, վոր նա, իրապես, ամբողջովին գերված է բանվոր դասակարգին խորթ և ոտարոտի իդեոլոգիայով՝ բուրժուազիայի իդեոլոգիայով, շահագործողներ իդեոլոգիայով, և վոր ժամանակակից սոցիալ-դեմոկրատիան իսկապես դարձել է մի կուսակցություն, վորը խոսքով «բանվորական է», իսկ գործով՝ մինչև ուղն ու ծուծը բուրժուական: Հասկանալի չի, վոր այդպիսի «սոցիալիստական» Ինտերնացիոնալը, վորն իրենից այլ բան չի ներկայացնում, բայց լեթե կապիտալիստների կազմալուծվող դասակարգի գաղափարական պոչը, կարիք չի զգում մշակելու սոցիալիզմի համար մղվող պայքարի Ինտերնացիոնալ ծրագիր:

Կոմինտերնի ծրագրի ընդունելու փաստն աչն է նշանակում, վոր, չնայած կոմմունիստական շարժման ամբողջ ազգային բազմապիստության, արդեն հասունացել են միջազգային կոմմունիստական հեղափոխության պայմանները, վոր բանվոր դասակարգն արդեն գիտակցել է կապիտալիզմի տապալման հիմնական խնդիրներն ու ուղիները, և վոր Կոմմունիստական Ինտերնացիոնալը հանդիսանում է միջազգային պրոլետարական հեղափոխության իսկական ղեկավար—ա-

ուջնորդը, վորն ունի այժմ զործողությունների համաշխարհային գիտականորեն հիմնավորված ծրագիր՝ կոմմունիզմի հողթանակի համար մղվող պայքարի սմբողջ դարաշրջանի համար: Ընդունված ծրագիրն առաջին փորձն է հանդիսանում այդ բնագավառում, բայց և նա միաժամանակ հանդիսանում է կոմինտերնի աշխատանքի արդասիքը վերջին մի շարք տարիների ընթացքում: Ինչպես հայտնի չէ, ծրագրի հարցի քննումն սկսվել է դեռ IV կոնգրեսում (1922 թ.): VI կոնգրեսը տեղ կզբավի պատմության մեջ ամենից առաջ վորպես մի կոնգրես, վորն առաջին անգամ հաստատեց միջազգային կոմմունիզմի ծրագիրը: Համաշխարհային կոմմունիզմը ծրագրի հանդես գալով լայն բաց է անում իր պայքարի դրոշմ՝ հեղափոխական ճանապարհով տապալելու իմպերիալիզմը, վոչընչացնելու դասակարգերը, վոչնչացնելու մարդու ամեն տեսակի շահագործումը մարդու կողմից: Վորպես պրոլետարիատի միջազգային փորձի մարմնացում և վորպես կոմմունիզմի գիտական թեորիայի կարևորագույն նվաճումների խտացում՝ կոմինտերնի ծրագիրը համաշխարհային կոմմունիստական շարժման հենարան կդառնա միջազգային պրոլետարական հեղափոխության ամբողջ դարաշրջանի համար:

## 2. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Վորն է կոմինտերնի ծրագրի հիմնական գաղափարը:

Այդ հիմնական գաղափարը կախնում է նրանում, վոր Կոմիսոներնի Ծրագիրը համաբխարհային պրոլետարական զիկոսուհուրալի Ծրագիր է,

Ծրագրի մեջ կարելի չէ գտնել միայն համեմատաբար մի փոքրիկ գլուխ՝ նվիրված վերջնական նըպատակին՝ համաշխարհային կոմմունիզմին: Ծրագիրը չի հետապնդում մանրամասնորեն նկարագրել այն, թե ինչպես է լինելու կոմմունիստական հասարակութունը: Վորպես հետևողական մարքսիստներ, մենք կանգնած ենք դիպլեկտիկական մատերիալիզմի գիտական բազայի վրա, վորի վոգովտոգորված է ամբողջ ծրագիրը, ուստի և մենք չենք կարող զբաղվել ապագա կոմմունիստական հասարակության կառուցման վերաբերյալ մարգարեություններով ու գուշակություններով: Իր վողջ ելությամբ հակադիր իդեալիստական պատմահայեցողության բոլոր և ամեն տեսակի ձևափոխություններին, ծրագիրը միայն լուսաբանում է այն կոմմունիստական սիստեմի հիմնական ուղենիշները, վորը պիտք է հաջորդի կազմալուծվող կապիտալիզմին:

Մյուս կողմից, ծրագրում տրված է ժամանակակից կապիտալիզմի մանրամասն անալիզը: Նրա իմպերիալիստական դարաշրջանի անալիզը: Այն ամենը, ինչ վոր հիմնական է, ասված է այդտեղ, թե ժամանակակից կապիտալիզմի արժատների մասին և թե զարգացման պայմանների ու հեռանկարների մասին: Ընդ սմին՝ համաշխարհային կապիտալիստական սիստեմի անալիզը դրսևորում է այդ սիստեմի բնույթը և նրա մոտեցող անխուսափելի անկումը: Այդ անալիզում առանձին ուղադրություն է նվիրված կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամին, դրա հետ կապված՝ բանվոր դասակարգի և ընդհանրապես աշխատավոր զանգվածների դրության վատթարացման փաստին և դրա հետևանքով ծայր առած համաշխարհային հեղափոխության ա-

ուաջին փուլին: Յեւ իրոք, կապիտալիզմի վերջին տասնամյակի պատմութիւնը — մասնավանդ յեթե այն նկատի առնենք համաշխարհային իմպերիալիստական պատերազմի պրիզմայով — միանգամայն ակնհայտնի կերպով ցուցահանում ե կապիտալիզմի ժամանակակից ընդհանուր ճգնաժամի անելանելիութիւնը: Բանվոր դասակարգի և գաղութային ժողովուրդների շահագործման աճումը և դրա հետ կապված՝ դասակարգային պայքարի հարաճուն սրումն եւ ավելի խթանում են միջազգային պրոլետարական հեղափոխութեան զարգացումը: Ժամանակակից կապիտալիզմի ներհակութիւնների աճումը և ԽՍՀՄ-ի կազմը վելու հետեանքով համաշխարհային իմպերիալիստական սիստեմում առաջացած հսկայական ճեղքվածքը՝ գործնականապես առաջադրում են կապիտալիզմի դեմ մղվող կոմունիստական պայքարի արժատական խընդիրները:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանի համար առանձնապես բնորոշ են Ֆաշիզմի տիրապետութիւնն առանձին յերկրներում և Ֆաշիստական մեթոդները տարածումը նորանոր պետութիւնների վրա: Ֆաշիզմը, վորի դրոշի վրա ամենից առաջ գըրված է հեղափոխական պրոլետարական ավանգարդի քայքայում ու վոչնչացում, իրապես մինչև վերջ մերկացնում և բուրժուական դիկտատուրայի ելութիւնը ժամանակակից հասարակութեան մեջ: Ֆաշիզմը, վորը բուրժուական դեմոկրատիան փոխարինում է անմիջական բուրժուական դիկտատուրայի մեթոդներով, միայն ընդգծում է կապիտալիզմի ժամանակակից ճըգնաժամի վողջ անելանելիութիւնը: Ֆաշիստական ու-

ժիմի դարգացման լուրիկան վող միայն չի տանում դեպի դասակարգային պայքարի մեղմացում, այլև, ընդհակառակը, ամբողջ ուժով ու վորոշակի մոտեցնում է մարտնչող դասակարգերին արմատական պրոլելեմին, այն է՝ իշխանութեան պրոլելեմին: Չնայած սոցիալ-դեմոկրատիայի ուղղաճի և անուղղակի պաշտպանութեան, Ֆաշիզմը վող միայն չի կարողանում ամբապնդել կապիտալի իշխանութիւնը, այլև ավելի սուր կերպով է դնում բուրժուազիայի հեղափոխական տապալման խընդիրը, պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրը: Ֆաշիզմի տիրապետութիւնն Իտալիայում հենվում է այն տաժանելի ուժիմի վրա, վոր կիրառվում է այնտեղ բանվոր դասակարգի հեղափոխական տարրերի վերաբերմամբ: Այդ ուղիով է ընթանում նաև Ֆաշիզմը Լեհաստանում: Ֆաշիզմի մեթոդները, վոր անքակտելիորեն կապված են բանվոր-դասակարգի դեմ ձեռնարկվող սեպրեսիաների ուժեղացման հետ, կարող են տանել միայն դեպի դասակարգային պայքարի սրում, մի պայքար, վորը վորոշ մոմենտում բացառիկ ուժով կըպատուի և կվոչնչացնի կապիտալիստական ուժիմի ֆաշիստական կեղևը: Այժմյան քսան և չերեսնամյա ֆաշիստական տաժանակիր դատավճիռները կոմունիստական գործիչները վերաբերմամբ՝ միայն բորբոքում են պրոլետարական վրեժի զգացմունքը դեպի կապիտալիստական շահագործողների տիրապետութեան մահվան դատապարտված ուժիմը:

Կապիտալիզմի ճգնաժամը ժամանակակից պայմաններում ունի համաշխարհային բնույթ: Իմպերիալիզմը կապի և կապիտալիստական պետութիւններին իրար հետ համաշխարհային մասշտաբով: Կապիտալիս-

տական սիստեմի սուանձին մասերն այժմ զարգանում են՝ ամենասերտ կերպով կապված մնալով ժամանակակից կապիտալիզմի հիմնական կինտրոններին: Ժամանակակից կապիտալիզմի սիստեմում ներքին հակասություններն առանձին յերկրներում հետզհետե դառնում են միջազգային կարգի հակասություններ: Չկա վոչ մի տնտեսապես զարգացած յերկիր, վորը կապված չլինի համաշխարհային շուկայի հետ և չզտնվի մի ավելի հզոր կապիտալիստական պետության ազդեցության տակ:

Իրենց հերթին, իմպերիալիզմի խոշորագույն յերկրներին միջև յեղած հակասությունները վոչ միայն չեն մեղմանում, այլև հետզհետե խորանում են: Միջազգային հակասությունների կենտրոնում այժմ ծայր ե առել յերկու կապիտալիստական հսկաների՝ Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների պայքարը: Կապիտալիզմի զարգացման պայմանները հետզհետե ավելի սուր կերպով են առաջ մղում կապիտալիստական հրակաների գերիշխանության խնդիրը համաշխարհային իմպերիալիստական սիստեմում: Կապիտալիստական սիստեմի ժամանակակից զարգացման բնույթը և մանավանդ՝ համաշխարհային կապիտալիզմի և առաջին սոցիալիստական պետության միջև յեղած պայքարի անխուսափելի սրումը վճռականորեն առաջադրում են պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի խնդիրը: Ծրագրի նշանակությունն ամենից առաջ կաշանում է նրանում, վոր այդտեղ համաշխարհային իմպերիալիզմին տեսականորեն և գործնականապես հակադրված է համաշխարհային կոմունիզմն իր պայքարի դրոշով՝ հանուն համաշխարհային պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի:

4796-919


Կոմինտերնի ծրագիրը, վոր բազա չե հանդիսանում բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունների ծրագրերի համար, պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի ծրագիր է:

Միաժամանակ ծրագիրը պետք է հաշվի առնեք առայժմ մեկուսացած սոցիալիստական պետության՝ ԽՍՀՄ-ի գոյությունը:

Հակառակ նախկին նախագծերին, ընդունված ծրագրում հատուկ գլուխ է նվիրված ԽՍՀՄ-ի պրոլետարիատի դիկտատուրայի հարցին: Այդ գլխում տրված է Խորհրդային Միության զարգացման պայմանների և հեռանկարների անալիզը, և այդ կապակցությամբ լուսաբանված է թե ԽՍՀՄ ի նշանակության և նրա միջազգային հեղափոխական պարտականությունների խնդիրը և թե միջազգային պրոլետարիատի՝ ԽՍՀՄ-ի վերաբերմամբ ունենալիք պարտականությունների խնդիրը: Ծրագրում նմանապես լուսաբանված է սոցիալիզմի հաղթանակի հնարավորության խնդիրը՝ նախապես մեկ կամ մի քանի յերկրներում: Այժմ այդ հարցի պարզ լուսաբանությունը տրված է վոչ միայն կոմունիստական կուսակցությունների և կոմինտերնի այս կամ այն բանաձևերում, այլև Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագրում:

Ինչ ավելին: Ծրագրում, վորի ամենախոշոր գլուխը կապիտալիզմից գեպի սոցիալիզմ տանող անցողիկ շրջանին վերաբերող գլուխն է, տրված է նաև հեղափոխությունների հիմնական տիպերի (տեսակների) ընդհանուր բնութագիրը՝ պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար մղվող պայքարի շրջանում: Ծրագրում տրված են համապատասխան

(2217-57)



սխեմատիկ բաժանում և վորոշ որինականեր ըստ չերկր-  
ների յերեք հիմնական տիպերի: Առաջին տիպի չերկր-  
ների շարքում դասված են բարձր կապիտալիզմի չերկր-  
ները (Միացյալ Նահանգները, Գերմանիան, Անգլիան),  
ուր անմիջական խնդիր և հանդիսանում պրոլետա-  
րիատի դիկտատուրայի համար մղվող պայքարը: Ծրա-  
գրում նշված և չերկրների նաև մի այլ տիպ, այն է՝  
գաղութային և կիսագաղութային չերկրները (Չինաս-  
տան, Հնդկաստան), ինչպես նաև կախյալ չերկրները  
(Արգենտինա, Բրազիլիա), ուր գոնե, վորպես կանոն,  
դեռ չկան համապատասխան պայմաններ ինքնուրույն  
սոցիալիստական զարգացման համար: Վերջապես այդ  
չերկու տիպերի միջև նշված և չերկրների մի չերրորդ  
տիպ՝ կապիտալիզմի զարգացման միջին մակարդակով  
(Սպանիա, Պորտուգալիա, Լեհաստան, Հունգարիա,  
Բալկանյան չերկրներ), վորտեղ կա նյութական նա-  
խադրյալների վորոշ մեծամասնում սոցիալիստական շի-  
նարարության համար, բայց վորտեղ դեռ չեն ավարտ-  
ված բուրժուա-դեմոկրատական բարեփոխություն-  
ները, ուստի և դրանից գոնե մի քանիսի վերաբերմամբ  
չի կարող ժխտվել բուրժուա-դեմոկրատական զարգաց-  
ման վորոշ շրջան: Յերկրների այդ չերեք հիմնական  
տիպերը նշված են ծրագրում՝ համաշխարհային պրո-  
լետարական հեղափոխության համար մղվող պայքարի  
հեռանկարների կապակցությամբ: Այդ նշումներով, թեև  
ամենաընդհանուր ձևով, ծրագիրը կոնկրետացնում և  
համաշխարհային կոմունիզմի համար մղվող հաղթական  
պայքարի ուղին:

### Յ. ԿՈՄՄՈՒՆԻԶՄ ՅԵՎ «ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ՌԵՖՈՐՄԻԶՄ

Ծրագրում, վորն իրենից ներկայացնում և կոմուն-  
իզմի տեսականորեն կոփված դեմքը կապիտալիզմի  
դեմ, չի կարող կարևոր տեղ չզբաղիլ կոմունիզմի՝ բան-  
վոր դասակարգի շարքերում չեղած գլխավոր գաղա-  
փարական թշնամու խնդիրը, այն է՝ այսպես կոչված  
«սոցիալիստական» ռեֆորմիզմի խնդիրը: Ուստի և  
ամբողջ ծրագրի միջով անցնում և կոմունիզմի՝ վոր-  
պես միակ դասակարգային պրոլետարական իդեոլո-  
գիայի հակադրությունը սոցիալ-ռեֆորմիզմի բոլոր և  
ամեն տեսակի ձևափոխություններին: Ընդ սմին բա-  
ցի սոցիալիզմի պատմության համառոտ անալիզից և  
դրա հետ միասին՝ սոցիալ-դեմոկրատիայի սոցիալ-իմ-  
պերիալիստական վերասերման անալիզից, ծրագրում  
տրված և բանվորական շարժման ներսում չեղած՝ կոմ-  
ունիզմին հակառակ բոլոր հիմնական իդեոլոգիաների  
սեղմ բնութագրերը:

Արձանագրելով բազմաթիվ հոսանքների առկա-  
լությունը բանվոր դասակարգի մեջ, սկսած բացահայտ  
ռեակցիոն հոսանքներից—ինչպես, որինակ՝ կոնֆեսսիո-  
նալ հոսանքներն են (կոռնական իդեոլոգիայի տիրա-  
պետությամբ) — մինչև այնպիսի հոսանքներ, վորպիսին  
են անարխիզմը և «հեղափոխական» սինդիկալիզմը,  
վորոնք քողարկում են իրենց գաղափարական չնթա-  
կայությունը բուրժուազիալին ձախ-արմատական ֆրա-  
գաբանությամբ, ծրագիրը դրսևորում և նրանց՝ հեղա-  
փոխական պրոլետարիատին միանգամայն խորթ և ո-  
տարոտի գաղափարական և պրակտիկ ելությունը:  
Ծրագրում առանձին ուշադրություն և դարձված դա-  
սակարգային-պրոլետարական գծի չերկու հիմնական

խեղաթլուրումները վրա Դրանք են՝ ուղարկուողները  
իր բոլոր ձևափոխութիւններով և հետո՝ հեղափոխա-  
կան ավանտյուրիզմը, վորը սովորաբար սերտ կերպով  
կուսոված և լինում նույն ուղարկուողներին ստական քաղա-  
քականութեան հետ, բայց քողարկվում և «ձախ» ֆը-  
րագաբանութեամբ:

Մեր հեղափոխութեան փորձից հայտնի չե, վոր  
քաղաքական կացութեան մեջ տեղի ունեցող խոշոր  
փոփոխութիւնները շրջանում և մանավանդ անխուսա-  
փելի ժամանակավոր նահանջների շրջանում, առժա-  
մանակ՝ նույնիսկ կոմունիստական կուսակցութիւննե-  
րի շարքերում՝ յերեան են գալիս այնպիսի տրամա-  
դրութիւններ, վորոնց Լենինն անվանել է՝ «ձախու-  
թեան» մանկական հիվանդութիւն կոմունիզմի մեջ»: Ինչպես  
հայտնի չե, այդպես եր դրութիւնը մեղանում  
Բրեստի շրջանում, չերը մեր կուսակցութեան մեջ կազ-  
մըվեց այսպես կոչված «ձախ կոմունիստները» (նկատի  
առեք՝ վոչ սոսկ կոմունիստների, այլ «ձախ» կոմուն-  
իստները) գրուպպան: Արժե հիշել նաև հեղափոխու-  
թեան դժվարագույն շրջանի մասին՝ նեպին անցնելուց  
առաջ, չերը նման տրամադրութիւնները և, բացի դը-  
րանից, մի առանձին հոսանք իր չուրհատուկ «բան-  
վորական» նշանաբանով խիստ հակադրում եր իրեն  
կուսակցութեան լենինյան գծին: Այժմ մենք գիտենք,  
վոր նաև այնպիսի շրջանում, չերը հեղափոխութիւնը  
հաղթականորեն անցնում և իր ճանապարհին չեղած  
հակայական դժվարութիւնների վրայով, — մանավանդ  
սոցիալիստական շինարարութեան արմատական խըն-  
դիրը գործնականապես լուծելիս, չերկրի ինդուստրիաց-  
ման բացարձակապես անհրաժեշտ քաղաքականութիւն

կիրառելիս, — նույնիսկ կոմունիստական կուսակցու-  
թիւնները շարքերում առաջ են գալիս գանազան տե-  
սակի գաղափարական տատանումներ, և դրանց թվում  
այնպիսիները, վորոնք իրապես հանդիսանալով սոցիալ-  
դեմոկրատական ուղարկուողների մի վիժվածք, սի-  
րում են զարգարվել «ձախ» փետուրներով և աշխա-  
տում են իրենց աջ քաղաքականութիւնը թաղցնել  
ձախ ֆրագաբանութեան տակ: Մի ծրագիր, վորը հաշ-  
վի չե առնում վոչ միայն այսորվա պայմանները, պետք  
և գնահատական տար պրոլետարական գծի այդ գա-  
ղափարական խեղաթլուրումներին և զգուշացնելը, վոր  
այդպիսի իդեոլոգիան կարող և վորոշ պայմաններում  
պրոլետարական շարքերի ամենավտանգավոր քայքա-  
յիչի գեր կատարել և դրանով հենց՝ պրոլետարիատի  
հեղափոխական շարժման ամենափաստակար արդելակի  
գեր կատարել:

Կոմունիստական Ինտերնացիոնալի ստրատեգիա-  
լին ու տակտիկալին նվիրված գլխում տրված և այդ  
իդեոլոգիայի բնութագրերը: Բայց դրա հետ միասին սուր  
կերպով և զրված կոմունիզմի գլխավոր գաղափարա-  
կան թշնամու խնդիրը՝ սոցիալիստական ռեֆորմիզմի  
խնդիրը, վորին գլխավորում և Ա Ինտերնացիոնալը:  
Ծրագրի մեջ ուղղակի ասված և, վոր ժամանակակից  
սոցիալ-դեմոկրատիան հանդիսանում և իմպերիալիզմի  
գլխավոր հնարանը բանվոր դասակարգի մեջ, ուստի  
և հանդիսանում և կոմունիզմի գլխավոր թշնամին  
բանվորական մասսաներում:

Բնորոշ և, վոր ռեֆորմիզմն էլ չի ուղղում բացա-  
հայտորեն հանդես գալ բանվոր դասակարգի առաջ  
այնպես, ինչպես վոր նա կա: Նա չի իր բուրժուա-

մեղչանական ելությունը ծածկելու համար կուզվում է նախշուն զգեստներով, հանդես գալով «սոցիալիստական» ցուցանակով: Ծրագրում առանձնապես մեծ ուշադրություն է նվիրված «սոցիալիստական» ռեֆորմիզմի մերկացմանը, նկատի առնելով նրա բուրժուական վողջ ելությունը, վոր նույնպես քողարկվում է «բանվորական»: Նշանաբանով: Այդ անհրաժեշտ է այն նկատառումով, վոր սոցիալ-դեմոկրատիայի տեսականի ու գործնականի մերկացումը՝ մասսաները մեզ հետ կապելու համար մղվող գաղափարական պայքարի հիմնական դժվարությունն է հանդիսանում: Չնայած այն բանին, վոր սոցիալ-դեմոկրատիան, սկսած 1914 թ. հայտնի ողոստոսի 4-ից, չերբ գերմանական սոցիալիստները ձայն տվին Վիլհելմ կալսեր արվելիք վարկերին՝ իմպերիալիստական պատերազմ վարելու համար,— չնայած այն բանին, վոր այդ ժամանակից սկսած սոցիալ-դեմոկրատիան շարունակ դահավիժում էր դեպի ցած, դառնալով այժմ վոչ միայն իմպերիալիզմի գաղափարական հենարանը, այլև Ֆաշիզմի անմիջական գորավիզը— բուրժուական և մանր-բուրժուական նախապաշտրունների ու ժր փակավին մեծ է բանվորների մեջ: Դրա վրա չեղ հենց խարսխված է սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը բանվորական մասսաներում:

Սակայն հենց այն ժամանակից, չերբ սկսվեց սոցիալիզմի սոցիալ-իմպերիալիստական վերասերումը, այսինքն սկսած համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբից, կոմունիզմը վճռականորեն հակադրեց իրեն սոցիալ-դավաճանական Ինտերնացիոնալին: Սկզբում՝ կոմունիստական ինտերնացիոնալիզ-

մի դրոշի տակ՝ սկսեցին հավաքվել բանվոր դասակարգի առանձին հեղափոխական տարրերն ու զրուպպաները: Բայց կոմունիստական Ինտերնացիոնալի այդ առաջին կազմակերպողներն, սկսած պատերազմի ժամանակ գումարված հայտնի ցիմմերվալդյան և կինտալյան յիջազգային կոնֆերենցիաներից, արդեն այն ժամանակ իսկական պրոլետարական շահերի միակ ներկայացուցիչներն էլին: Դրանից հետո կոմունիզմն աճեց ու դարձավ մի հզոր կազմակերպություն, դարձավ պրոլետարիատի հեղափոխական միասնականություն, կապիտալիզմի լուծը խորտակելու համար մղվող պրոլետարական պայքարի միասնության իսկական ներկայացուցիչը: Սոցիալ-դեմոկրատիան դեռ էլի աշխատում է խարել բանվորներին, ներկայացնելով կոմունիստներին վորպես միասնական պրոլետարական Ֆրոնտը պառակտող ելմենտներին: Սոցիալ դեմոկրատիայի այդ ստոր խարբալու թյանը, նրա զզվելի կեղծավորությունը կոմիստերնի ծրագրում հակադրված է բանվոր դասակարգի միասնականությունը համար մղվող պայքարը՝ ընդդեմ բուրժուազիայի և կապիտալի «սոցիալիստական» գործակալներին: Իրապես, մանավանդ այժմյան պայմաններում, հենց սոցիալ-դեմոկրատիան է պառակտում ու կազմալուծում պրոլետարական պայքարի միասնական Ֆրոնտն ընդդեմ կապիտալի, կատարելով բուրժուազիայի սպասավորի դեր: Նշավակելով բանվոր դասակարգի կազրերի պառակտողներին ու կազմալուծողներին, ծրագրերը հայտարարում է, վոր «սոցիալ-դեմոկրատիայի հիմնական դերը կայանում է պրոլետարիատի մարտական միասնականությունը խախտելու մեջ, վորն անհրա-

ժեշտ և նրան՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: Իր հերթին Կոմունիստական Ինտերնացիոնալը հանդես է գալիս իր ծրագրում բանվոր դասակարգի միասնականությունը զրոշակով, կապիտալիզմը խորտակելու համար մղվող պրոլետարական պայքարի միասնականության և հեղափոխական պրոլետարիատի հաղթանակի զրոշակով: Բանվորների կոմունիստական ավանգարդի հուժկու ձայնով ծրագիրը հայտարարում է, վոր միջազգային պրոլետարիատի այդ հեղափոխական դասակարգային միասնականությունը պետք է իրագործվի և կիրառործվի պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի հաղթանակի զրոշի տակ:

Վերջապես ծրագրի հարցի առթիվ անհրաժեշտ է կանգ առնել ծրագրի մի նախկին թերություն վրա, վորը VI կոնգրեսան աշխատեց հաղթահարել տեքստի վերջնական ձևակերպման ժամանակ: Սկզբնական նախագծերի համեմատությամբ, կոնգրեսի կողմից ընդունված ծրագիրը մեծապես բարեփոխված է այն տեսակետից, վոր նա ընդգրկում է թե Յևլրոպայի և Ամերիկայի զարգացումը, և թե մյուս աշխարհամասերի զարգացումը: Ծրագրերը վերջնականապես ձևակերպելիս՝ կարևորագույն խնդիրներից մեկն այն էր, վոր պետք էր հաղթահարել ծրագրի այսպես կոչված «յեվրոպականության» թերությունները, Ծրագրերը հաշվի չէ առնում ժամանակակից Չինաստանի և Հնդկաստանի զարգացման խոշորագույն մոմենտները, ինչպես նաև մյուս գաղութային չրկրներում կատարվող անցքերի աճող նշանակությունը ներկա դարաշրջանի համար: Նկատի առնելով այդ, ծրագրում հատուկ ու-

շաղրթություն է նվիրված այնպիսի գաղափարական հոսանքներին, վորպիսին է սուսյաթսենիզմը Չինաստանում, գանդիզմը Հնդկաստանում, ինչպես նաև զարվիզմը Ամերիկայի նեգրերի մեջ: Այդպիսի և նման բուրժուական և մանր-բուրժուական իդեոլոգիաների մերկացումը հսկայական նշանակություն ունի, վորովհետև ժամանակակից պայմաններում այդ իդեոլոգիաները խոշորագույն սեպեցիոն դեր են կատարում: Այդ իդեոլոգիաների սեպեցիոնությունը դեռ վորոշ արտահայտություն է գտնում նույնիսկ բանվորների վորոշ սակավաթիվ շերտերում: Առանձնապես վտանգավոր է հեղափոխական վոգին մարելու մտքով՝ այդ իդեոլոգիաների աղդեցությունը գուղացիական մասսաների և ընդհանրապես իմպերիալիզմի կողմից ստրկացված մանր բուրժուական մասսաների վրա: Պարզ է, վոր ներկա մոմենտում, Կոմիստերնի ծրագրում հաղիվ թե հնարավոր լինե՞ր հաշվի առնել այդ իդեոլոգիաների ձևափոխությունները, վորոնց հակահեղափոխական դերը դեռ կարող է շատ խոշոր նշանակություն ունենալ գաղութների հետագա հակաիմպերիալիստական պայքարի ընթացքում, բայց այն ամենը, ինչ վոր հիմնական է այդ ազգեցությունները մերկացնելու և նրանց դեմ պայքարելու տեսակետից, ծրագրում ասված է ամենայն պարզորոշությամբ:

## II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 1. ՅԵՐԵԲ ՇՐՋԱՆ ՅԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՍԵՆՏԸ

Ծրագրում VI կոնգրեսը տվել է ժամանակակից կապիտալիզմի ընդհանուր զարգացման բնութագրերը:

Դրա հետ միասին հատուկ վորոշման մեջ կոնգրեսը ավել ե նաև ներկա միջազգային դրուժյան և կոմմունիստական Խնտերնացիոնալի հերթական խնդիրները գնահատականը:

Կոնգրեսի հիմնական բանաձևում խոսվում է կապիտալիստական սիսեմի հեսպասեռագմյան զարգացման պատմության լեբեբ քոլանցերի մասին և այդ կապակցությամբ՝ միջազգային բանվորական ցարժման զարգացման համապատասխան շրջանների մասին: Առաջին պատմաշրջանը, վորի կիզակետը 1921 թվականն էր, ներկայացնում էր իրենից կապիտալիզմի ամենասուր ճգնաժամի շրջանը, վորը վերջացավ մի կողմից՝ առաջին սոցիալիստական պետության, ԽՍՀՄ-ի դիրքերի ամրապնդմամբ, իսկ մյուս կողմից՝ միջուգային պրոլետարիատի մյուս գոմարտակների մի շարք ծանր պարտութուններով: Յերկրորդ պատմաշրջանը, վորն սկիզբ առավ մոտավորապես 1923 թ. վերջին, հիմնականում՝ մեկ կողմից հատկանշիլի չե վորպես կապիտալիզմի մասնակի կալունացման շրջան, մյուս կողմից վորպես տնտեսական արագընթաց վերելքի շրջան ԽՍՀՄ-ում: Յերկրորդ պատմաշրջանի սկիզբ կարելի չե համարել ալն մոմենտը, յերբ կապիտալիստական սիսեմը—վորչափ կարելի չե խոսիլ ալստեղ նրա մասին իր ամբողջությամբ—արդեն սկսեց անցնել մինչպատերազմյան մակարդակից, մի բան, վորին համարյա թե միաժամանակ ընթացակցում է վերակառուցման շրջանին անցներ ԽՍՀՄ ում: Այս յերրորդ շրջանը, վորի հիմնական գծերն այժմ արդեն բավականաչափ պարզորոշվել են, բնավ չի նշանակում, թե ժամանակակից կապիտալիստական դարգացումն ամուր

ու կալուն է: Ընդհակառակը, ներքին հակասութունների աճումը կապիտալիստական չերկրներում հետըհետե ավելի սերտորեն և հլուսվում միջուգայլին հակասութունների սրման հետ՝ թե իրեն, կապիտալիզմի առանձին չերկրների միջև և թե մեկ կողմից կապիտալիզմի չերկրների և մյուս կողմից՝ ԽՍՀՄ-ի միջև: Յերրորդ շրջանի պայմաններում, յերբ ավելի մեծ չափով են սրվում հակասութունները արտադրական ուժերի աճման և սպառման շուկաների սակավության միջև, իմպերիալիստական պատերազմների նոր շրջանն ակնհայանի կերպով ավելի ու ավելի չե մոտենում և այժմ արդեն իր մասնակի արտահայտութունն է գտնում (որինակ՝ Յապոնիան Չինաստանում):

Կապիտալիզմը ջղաձգական փորձեր է անում ամբացնելու իր դրութունը: Դրա համար կապիտալիզմն էլ ավելի բարձրացնում է իր տեխնիկան, ուժեղ աշխատանք է կատարում արտադրության ռացիոնալացման բնագավառում, ավելի ևս արագ կերպով ծավալում է իր մոնոպոլիստական-կապիտալիստական կազմակերպութունները և, վերջապես, կապիտալիզմն ավելի մեծ չափերով ոգտագործում է իր տիրապետության համար այնպիսի միջոցներ, ինչպիսին է սոցիալ-դեմոկրատիան, և ստեղծում է նոր պետական ձևվեր, ինչպես, որինակ, Ֆաշիզմ: Սակայն դրանից կապիտալիզմի կալունացումն ավելի հաստատուն չի դառնում: Կապիտալիզմի հակասութուններն աճում են և, զարգացման վորոշ փուլի մեջ, անխուսափելիորեն դեպի անկում կտանեն կապիտալիստական բովանդակ սիսեմը: Կապիտալիզմի՝ այդ մի շարք փուլերի բաժանվող ճգնաժամն իր ամբողջ ծանրությամբ հետըգ-

հմտե ընկնում ե բանվոր դասակարգի և աշխատավոր դասասաների ուսերին, վորոնց կյանքի պայմանները վատթարանում են: Կապիտալի գրոհը պրոլետարիատի դեմ ուժեղանում ե: Ավելի մեծ չափով ե խուզվում աշխատավարձը, լերկարացվում ե բանվորական որը, և դրա հետ միասին ավելանում են միլիոնավոր նորանոր գործազուրկներ: Փինանսական կապիտալի գերիշխանությունը, վոր բանկերի և արդյունաբերություն միաձուլում ե նշանակում, ավելի յե նպաստում կապիտալի կենտրոնացմանը, վորն իր հերթին տանում ե դեպի շահագործող դասակարգերի կազմակերպությունների և պետական իշխանություն մարմինների միաձուլում: Բուրժուական դեմոկրատիան ակնհայտնի կերպով, մշտապես խորացող ճգնաժամ ե ապրում: Դրա հետևանքով բանվորների հասարակ տնտեսական պայքարը հանուն իրենց աուրջա շահերի՝ վոչ միայն հանդիպում ե համապատասխան կապիտալիստների դիմադրություն, այլև հետզհետե ավելի ու ավելի յե զարնվում բուրժուազիալի քաղաքական տիրապետության վողջ սխտեմին: Նույնիսկ փոքր տնտեսական գործազուրկներն սկսել են ավելի ու ավելի քաղաքական բնույթ ստանալ, իսկ խոշոր տնտեսական կոնֆլիկտներն արդեն՝ մի դասակարգ կանգնեցնում են մյուս դասակարգի դեմ՝ պրոլետարիատին բուրժուազիայի դեմ: Այդ դասակարգային պայքարի ամենալուրջ սրուհն ե նշանակում և իր արտահայտությունն ե դանում բանվորական լայն մասսաների աճող ձախացման մեջ: Կապիտալի դեմ մղվող պայքարը ներկա պայմաններում անքակտելիորեն կապված ե սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարի հետ: Սոցիալ-

դեմոկրատիան ամեն ինչ անում ե, վորպեսզի լերկարածգի կապիտալիզմի գոյությունը և հետզհետե ավելի բացահայտորեն ե հանդես գալիս կապիտալիստներե դասակարգի դաշնակցի դերում: Մինչ նորանոր փորձեր են արվում պակասեցնելու բանվորների աշխատավարձը, աճում ու հակայաթիվ են դառնում գործազուրկների բանակները, կրճատվում են պրոլետարիատի տնտեսական կազմակերպությունների իրավունքները և այլն, սոցիալ-դեմոկրատիան ազդարարում ե՝ «խաղաղություն արդյունաբերության մեջ» և բուրժուազիայի հետ միասին «արդյունաբերական դեմոկրատիայի» քարոզ ե անում: Այդ բոլորը, այսինքն ժամանակակից կապիտալիզմի զարգացման ամբողջ լողիկան մղում ե բանվորներին մանր տնտեսական պահանջներից դեպի արմատական քաղաքական խրնդիրների դրումը, մղում ե նրանց աուրջա ընթացիկ կարիքները պաշտպանելու դիրքից դեպի պայքար իշխանություն գրավելու համար, իսկ այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատիան, վորպես իմպերիալիզմի հավատարիմ գործակալ, իր գլխավոր անելիքը գործազուրկներ չթուլլատելը, հակասությունները բխացնելը, բանվորներին պրոլետարական պայքարի արմատական խնդիրներից յետ վանելն ե համարում: Սոցիալ-դեմոկրատիայի դերը մինչև այժմ դեռ բավականաչափ չի պարզվել շատ ու շատ միլիոնավոր բանվորների համար, բայց ամեն ինչ խոսում ե հոգուս այն բանի, վոր նրա քաղաքականությունը, վոր հանում և կապիտալին լաքեյական ակներև ծառայություն մատուցելուն, նախապատրաստում ե նրա կատարյալ անկումը և դրա հետ միասին՝ բանվոր դասակարգի մեջ տակա-

վին պահպանված «սոցիալիստական», իսկ իրապիս-  
մանր-բուրժուական պատրանքների, հույսերի և ակն-  
կալությունների հետզհետե մոտեցող անկումը:

Մրանք են կապիտալիստական պետութայունների  
ներքին զարգացման հիմնական դժերը: Այդ ներքին  
հակասութայուններն անքակտելիորեն կապված են այն  
հակասութայունների հետ, վոր միջազգային մրցադաշ-  
տում հատուկ են կապիտալիզմին:

## 2. ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեխնիկական բազան վերակառուցելու, կապի-  
տալիստական ռացիոնալացում կիրառելու, կապիտա-  
լիստական կազմակերպութայունների նոր, ավելի լայն  
ձևերի և այլնի անցնելու վոչ մի փորձ չի կարող ներ-  
կա պայմաններում թուլացնել հակասութայունների  
աճումը կապիտալիզմի սիստեմում և հենց դրանով չի  
կարող թուլացնել դասակարգային պայքարի սրումը  
կապիտալիստական յերկրների ներսում: Բայց կապի-  
տալիստական յերկրները համաշխարհային շուկայի  
միջոցով մտցված են համաշխարհային տնտեսութայն  
սիստեմի մեջ: Այդ հանգամանքը, մի կողմից, անխու-  
սափելի չեր դարձնում ներքին դասակարգային հա-  
կասութայունների վերածումը միջազգային հակասու-  
թայունների՝ պրոլետարիատի և բուրժուազիայի միջև  
և, մյուս կողմից, համաշխարհային տնտեսութայն  
նշանակութայն աճման հետ միասին՝ զրոստորում և  
պայքարի սրումը կապիտալիստական պետութայուն-  
ների միջև՝ համաշխարհային գերիշխանութայուն ձեռք  
բերելու համար:

VI կոնգրեսի վորոշումների մեջ նորից և ավելի  
վճռականորեն ընդգծված է այն փաստը, վոր, համաշ-  
խարհային իմպերիալիստական պատերս դմից սկսած,  
կապիտալիզմի տնտեսական կենտրոնը Յեվրոպայից  
փոխադրվել է Ամերիկա: Արդեն միանդամայն պարզո-  
րոշ է, վոր ժամանակակից միջազգային հակասութայուն-  
ների մեջ հիմնականը այն հակասութայունն է, վոր ա-  
ռաջացել է հյուսիս-ամերիկյան աճող կապիտալիզմի  
յերկրի և Մեծ Բրիտանիայի միջև, վորը, չնայած իր  
արտադրական ուժերի վիթխարի չափերին, դեռ չի  
կարողացել հասնել նույնիսկ իր միջազգայնացման  
մակարդակին: Այդ չի նշանակում, վոր մյուս իմպե-  
րիալիստական յերկրների միջև չեղած հակասութայուն-  
ները նվազում են կամ կորցնում են իրենց նշանա-  
կութայունը: Նման պատկերացումներն անխուսափելի-  
որեն կտանելին դեպի սպարսալունիստական չեղրա-  
կացութայունների՝ թի կապիտալիստական ճգնաժամի  
ընթացքը և թե՛ նկատի առնելով այդ՝ հեղափոխա-  
կան պրոլետարիատի խնդիրները գնահատելու վերա-  
բերմամբ: Այդ պատահեց իր ժամանակին հենց այն  
հայտնի «թեորիայի» հետ, վորը հյուսվել էր Յեվրո-  
պայի մասին, այն Յեվրոպայի, վորին Ամերիկան «բա-  
ժին» եր տալիս: Այդ «թեորիան» այլ բան չեր, բայց  
յիթի իմպերիալիստական հսկայի հզորութայնամբ ճնշված  
ժամանակակից քաղքենու տրամադրութայունների չու-  
թամանակակից քաղքենու տրամադրութայուն: Բայց, մյուս կողմից,  
կոպիտ սխալ կլիներ նաև այն, յեթե մենք թերագնա-  
հատելինք Հյուսիսային Ամերիկայի առաջնակարգ  
դերը համաշխարհային կապիտալիզմի զարգացման  
մեջ: Այդ նշված և չեղիլ դեռ կոմինստերնի՝ V կոնգրեսի

վորոշումներում: Դրանից հետո ամերիկական կապիտալիզմի դերն աճել է, մասնավորապես Յեվրոպայում: Ի դուր չէ, վոր դերմանական ամբողջ տնտեսությունը գտնվում է համաշխարհային բանկերի և տրեստների լրագոր ամերիկացի **Ջիլբերտ Պարկերի** հսկողություն տակ: Պատահական յերևույթ չէ, վոր **Լեհաստանի** ֆինանսատնտեսական զարգացման գործին տարիներից ի վեր հսկում է ամերիկյան վարկատուների ներկայացուցիչ միտք Դյուին:

Անցել է այն ժամանակը, չերբ Միացյալ Նահանգները չէին զբաղվում Յեվրոպայի գործերով: Այժմ ընդհակառակը, Ամերիկան հետզհետե ծավալում է իր պայքարը կապիտալիստական Յեվրոպայի տիրապետող չերկրների դեմ և ամենից առաջ Անգլիայի դեմ՝ նպատակ ունենալով հաստատել իր զերիշխանությունը համաշխարհային քաղաքականության խնդիրներում: Դրա լավագույն ապացույցներից մեկը վերջերս այնքան աղմուկ հանած Կելլոգի պայմանագիրն է: Այդ պայմանագրով Ամերիկան բացահայտորեն ձգտում է հեղեմոնի տեղ զբաղել միջազգային քաղաքականության մեջ: Մինչ չկվրոպական շատ պետություններ, — վորոնք մասնակցում են անգլիական բուրժուազիայի զերիշխանության տակ գտնվող Ազգերի Լիգային, — զժկամություններ են դնում իրենց ստորագրությունը Կելլոգի պայմանագրի տակ, Ամերիկան այդ գործին մասնակից է անում վոչ միայն Յեվրոպայի պետություններին, այլ մյուս աշխարհամասերի պետություններին: Ինչպես հայտնի չէ, **ԽՍՀՄ**-ը նմանապես հայտարարություն արավ Կելլոգի պայմանագիրն ստորագրելու իր համաձայնության մասին, այսպես կոչված՝

պատերազմից՝ «վորպես ազգային քաղաքականության միջոցից» հրաժարվելու մասին:

Ի դեպ, չես պետք է թեթևակի շոշափեմ նաև այդ հարցը: Այն մոտիվները, վորոնք զբեցին **ԽՍՀՄ**-ին միացնելու իր ստորագրությունը Կելլոգի պայմանագրին, հիմնականում նշված են խորհրդային կառավարության հայտարարության մեջ: **ԽՍՀՄ**-ը ամենայն պարզությամբ հայտնեց իր կարծիքն ամերիկական իմպերիալիզմի «պացիֆիստների» այդ փաստաթղթի մասին:

Մեզ համար պարզ է, վոր իմպերիալիստական պացիֆիզմի մերկացումը չեղել է և կմնա վորպես մեր կարևորագույն պարտականություններից մեկը միջազգային պրոլետարիատի առաջ: Այդ մտքով պայմանագրի ստորագրումը մեր կողմից մենք չենք կարող չնկատել վորպես մի նոր հնարավորություն՝ առաջադրելու պայմանագիրն ստորագրած պետություններին մի արմատական խնդիր՝ զինաթափման խնդիրը, վորը հանգիստնում է պատերազմները դադարեցնելու միակ պայմանը և ուստի չի համատեղված իմպերիալիստական տիրապետության սիստեմի հետ: Կելլոգի պայմանագիրն ստորագրելու խնդիրը լուծելիս չի կարելի հաշվի չառնել իմպերիալիստական պետությունների մեջ չեղած հակասությունները: Այդ տեսակետից ամերիկական պայմանագրի ստորագրումը — վորչափ այդ պայմանագիրն որչեկտիվ կերպով վորոշ պարտավորություններ է դնում ստորագրող պետություններին վրա՝ հասարակական կարծիքի հանդեպ — խորհրդային Միության համար ունի վորոշ նշանակություն, մանավանդ այն իմպերիալիստական պե-

տուեթյունները դեմ, վորոնք առանձնապես շտապում են նոր պատերազմներ առաջ բերել և ուղղակի հարձակվել ԽՍՀՄ-ի վրա: Մեր կառավարությունը ժամանակին մերկացրեց այն փորձերը, վոր արվում էին բուրժուական պետությունների կողմից՝ կեկոբի պայմանագրերը ԽՍՀՄ-ի դեմ միասնական ճակատ ստեղծելու նոր միջոց գործնել, և այդպիսով թույլ չտվեց նրա նախաձեռնողներին իրագործելու այդ: Միաժամանակ պարզվեց, վոր վոչ միայն անհնար էր անտեսել Խորհրդային Միությունը, այլև ընդհակառակը, — վոչ միայն բանվորների, այլև մանր-բուրժուական լայն զանգվածների աչքում — ներկայիս ամեն ուղիղ անհիմն իմպերիալիստներին զրեց շատ անհարմար գրություն մեջ, այն իմպերիալիստներին, վորոնք ավելի շատ են շտապում ուղիղական հարձակում գործել ԽՍՀՄ-ի վրա:

Այսպիսով, Հյուսիսային Ամերիկյան բացահայտ պայքար է մղում՝ գերիշխանություն ձեռք բերելու միջազգային քաղաքականության մեջ: Դա անխուսափելիորեն սրում է հակասությունները Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև, վորը հանդիսանում է չերկրորդ ամենազոր իմպերիալիստական պետությունը: Այդ հակասությունները հետզհետե ավելի սուր և բացահայտ բնույթ են ընդունում: Այդ տեսակետից շատ բնորոշ են թեկուզ Միացյալ Նահանգների կառավարության այն փորձերը, վոր նա անում է՝ Յեդիպտոսի և Իրլանդիայի հետ նամիշականորեն կապվելու համար:

Բաց այդ միաժամանակ նաև նշանակում է, վոր ամբողջ աշխարհում այժմ չի մնում վոչ մի կապի-

տալիստական պետություն, վորն ակտիվ մասնակցություն չցուցաբերի համաշխարհային քաղաքականության մեջ: Այդ նշանակում է, վոր ամբողջ աշխարհի բոլոր ազգերը և բոլոր ժողովուրդները մասնակից են արվում շահերի այն պայքարին, վոր տեղի չի ունենում համաշխարհային քաղաքականության մրցադաշտում: Յեվ հենց զրանով էլ կապիտալիստական պետությունների միջև չեղած աչժմյան կոնֆլիկտներն անխուսափելիորեն տանում են դեպի համաշխարհային — իսպերիալիստական մեծագույն պատերազմների բռնկում:

### 3. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԵՎ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՆԳՐԵՍՍՈՒՄ: ՊԱՅՔԱՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԴԵՄ

Ներկա շրջանում համաշխարհային կապիտալիզմը՝ հանձինս մի շարք խոշորագույն պետությունների՝ ծանր տնտեսական դեպրեսիա չե ապրում: Այդ դեպրեսիան նկատելի չե վոչ միայն չեվրոպական չերկրներում, այլև հյուսիս-ամերիկյան կապիտալիզմի հզոր չերկրում: Կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրական ուժերի աճման և շուկաների սակավության միջև չեղած հակասությունն այժմ ավելի, քան չերբեխեցե առաջ է մղում գաղութների հետ ունենալիք փոխարարությունների խնդիրը: Համաշխարհային եկոնոմիկայի և գրա հետ միասին համաշխարհային քաղաքականության դարգացման մեջ գաղութները խնդիրը դառնում է ամենակարևոր խնդիրներից մեկը: Այդ խնդրի նշանակությունն ավելի

յե բարձրանում նրանով, վոր այնպիսի գաղութները և կիսագաղութների վերաբերմամբ, ինչպիսին ե Չինաստանը,— իսկ հետզհետե և Հնդկաստանը, իսկ վոչ հեռավոր ապագայում նաև Յեգիպտոսը— միջազգային հարաբերութունների տեսակետից ավելի ու ավելի սխալ ե դառնում այն հայացքը, վորի համաձայն այդ յերկրները նկատվում են սոսկ վորպես պաշարի որչեկտ իմպերիալիստական պետութունների միջև, վորչափ նրանք հետզհետե բռնում են ինքնուրույն կապիտալիստական զարգացման ուղին: Ընդամին գաղութային յերկրների զարգացումն այժմյան պայմաններում չի կարող չընթանալ մի շարք հեղափոխական խոր բեկումների միջով: Այսպես՝ որինակ՝ շինական հեղափոխության վերջին վերելքից հետո այժմ կատարվում ե մասսաների նախապատրաստման պրոցեսը՝ նոր ավելի հզոր հեղափոխական վերելք կատարելու Չինաստանում: Հնդկաստանում նմանպես տեղի չե ունենում հեղափոխական խմորումների ուժեղացում, վոր հզի չե հեղափոխական մեծ փոփոխիչներով:

Գաղութային յերկրների զարգացման այդ բընույթը հսկայական ցնցումներով ե արտահայտվում կապիտալիստական սխտեմի վրա: Դրա հետևանքով իմպերիալիզմի ներհակութունները սրվում են: Իր հերթին այդ սրումը տանում ե դեպի զինված ընդհարումներ իմպերիալիստների միջև, այսինքն՝ դեպի իմպերիալիստական նոր պատերազմներ: Թե չեկրոպական և թե ամերիկական խաղաղասերների այժմյան պացիֆիստական շարակրատութունն, այլ բան չի, բայց յեթե այդ նոր իմպերիալիստական պատերազմ-

ների նախապատրաստման քողարկում: Բավական ե ասել, վոր թե Յեվրոպայի և թե Ամերիկայի պացիֆիստները սխտեմատիկաբար ավելացնում են իրենց սպառազինումները և իմպերիալիստների ռազմա-դիվանագիտական նորանոր միութուններ են ստեղծում միմյանց և ԽՍՀՄ-ի դեմ: Իմպերիալիստական պացիֆիզմի մերկացման լավագույն միջոցներից մեկը հանդիսանում են խորհրդային կառավարության այն առաջարկները, վորոնք ձևակերպված են լեղել սկզբում վորպես ընդհանուր և լիակատար զինաթափում, իսկ հետո, իբրև մինիմում, վորպես բոլոր պետութունների մասնակի զինաթափում: Այդ բոլորը պատերազմի խնդիրը դարձնում ե ներկա, դարաշրջանի ամենագլխավոր խնդիրը:

Ահա թե ինչու Կոմիւնտերնի Վ կոնգրեսան առանձնապես քննության առավ պատերազմական վտանգի և իմպերիալիստական նոր պատերազմների դեմ պաշարելու միջոցների խնդիրը: Հասկանալի չե, վոր գաղութների հարցն ել դրվել ե վորպես կոնգրեսի որակարգի հատուկ կետերից մեկը:

Այդ բոլոր ասածներից հետևում ե այն, վոր Կոմմունիստական Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաները պետք ե ամեն կերպ ուժեղացնեն պաշարը սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորպես ներկա միջազգային կացության պայմաններում՝ բանվոր դասակարգի շարքերում իմպերիալիզմի առանձնապես վտանգավոր գործակալների դեմ: Վ կոնգրեսան առանձնապես ընդգծեց այդ խնդիրը: Միաժամանակ կոնգրեսը, նշելով քանիորների ձախացման պրոցեսը և դրա թվում ձախհոսանքների ուժեղացումը սոցիալ-դեմոկրատիայի

պրօլետարական կազմերում, առանձին շեշտով ընդգծեց «ձախ» սոցիալ-դեմոկրատական առաջնորդներին ամենափճոական մերկացման անհրաժեշտութիւնը, նկատի առնելով այն, վոր նրանք բանվորական մասսաների մեջ բուրժուական քաղաքականութիւն կիրառելու ամենանրբամիտ և, հետեւաբար, ամենափրատակար գործիչներն են: «Պաշար հանուն մասսաների» լուրունգը պետք է դառնա ել ավելի ակտուալ լողունգ ժամանանակակից պայմաններում, չերբ սրվում և բանվորների դասակարգային պայքարը կապիտալիզմ և աճում համաշխարհային նոր իմպերիալիստական պատերազմի վտանգը: Միասնական պրօլետարական ֆրոնտի տակտիկան պահպանում և իր կարևորագույն նշանակութիւնը, և կիրառելով այն ժամանակակից պայմաններում, վորպես կանոն, միայն վարից, պետք է նպաստի այն բանին, վոր բանվորական մասսաներն ավելի շատ անջատվեն սոցիալ-իմպերիալիստական II Ինտերնացիոնալից և նրա՝ Ամստերդամի արհմիութենական բաժանմունքից: Այդ տակտիկան չեղել և և կհնա վորպես սոցիալ-դեմոկրատիայի, ներառյալ նաև նրա «ամենաձախ» առաջնորդներին—մերկացման տակտիկա՝ հիմնված հարձակվող կապիտալին հակահարված տվող պրօլետարական ուժերի միացման վրա: Նկատի առնելով բանվորական ամենալայն գանգաձաներին մեր կողմը գրավելու խնդրի սրութիւնը, VI կոնգրեսը հատկապես շեշտեց առանձին կուսակցութիւնների թույլ կողմերը սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելու գործում, ինչպես նաև կոմմունիստների արհմիութենական աշխատանքի թուլութիւնը կապիտալիստական չեղելիներում: Ռեակցիոն

արհմիութիւններում կոմմունիստների կողմից կատարվելիք աշխատանքի խնդիրը չեղել և և մնում և վորպես մասսաներին կոմմունիզմի կողմը գրավելու հիմնական խնդիրներից մեկը:

Ներկա միջազգային կացութիւն պայմաններում մեր աշխատանքի ուժեղացումն արհմիութիւններում դարձել և կոմմունիստական Ինտերնացիոնալի համար մի առանձնապես սուր խնդիր: Մասսաներին մեր կողմը գրավելու համար ծավալվող պայքարի խնդիրը պարտավորեցնում և նաև կոմմունիստական չեղիտասարդութիւնը բոլոր կազմակերպութիւններին, ինչպես նաև ԿԻՄ-ին իր ամբողջութեամբ, իրենց հետագա ամբողջ աշխատանքի ընթացքում ուշադրութիւն կենտրոն դարձնել այդ խնդիրը:

Վերջապես կոմիստերնը ընդգծեց իր աշխատանքի արմատական բարելավման անհրաժեշտութիւնը՝ գլուղացիութիւն աշխատավորական լայն գանգաձաներին հեղափոխական պրօլետարիատի կողմը գրավելու ասպարիզում:

**III. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻԾԸ**

**1. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՏՐՈՑԿԱԶՄԻ ԴԵՍ**

Վերջին հարցը, վորի վրա անհրաժեշտ և կանգ առնել, այդ՝ իրեն, կոմմունիստական Ինտերնացիոնալի խնդիրն է, և այդ կապակցութեամբ՝ նրա հիմնական քաղաքական գծի խնդիրը ներկա շրջանում: VI կոնգրեսի բնորոշ գծերից մեկը՝ նրա վորո-

շումների միաձայն ընդունվելն է: Վ կոնգրեսսին հաջորդող ժամանակաշրջանում կոմիտեերնը ստիպված էր համառ պայքար մղել շատ ուղիղ գիտնականների դեմ, վորոնք հարձակվում էին կոմիտեերնի լեհիստան գծի վրա՝ թե «աջից» և թե «ձախից»: Սակայն կոմիտեերնի ստատական Ինտերնացիոնալը Վ կոնգրեսս չեկավ իր շարքերի լիակատար միասնականութեամբ, վոր կոփվել էր ամեն տեսակի գաղափարական տատանումների և, առաջին հերթին, տրոցկիզմի դեմ մղված պայքարում: Կարելի չէ ասել, վոր կոմիտեերնի միասնականութունը ձեռք բերվեց տրոցկիզմի հաղթահարման հետևանքով: Վերջինս առաջ յեկավ անմիջականորեն մեր խորհրդային պայմաններից, Համկուլուսից (բ), բայց վորպես հայացքների ուրույն սխտեմ, վորի ելուցունը ձախ Ֆրազներով քողարկված աջ քաղաքականութունն է, փորձեց հանգես գալ իբրև թե լեհիստանի պաշտպանութեան դիմակի տակ և միաժամանակ կատարել հարձակումներ գործեց լեհիստան կոմիտեերնի գծի դեմ: Այդ իրենցիկիստան չեկարող մագնիս չդառնալ զանազան ուղիղ տրոցկիստական ելեմենտների և խմբակների համար, վորոնք թեև գտնվում էին կոմիտեերնի շարքերում, բայց դեռ չէին ազատագրվել սոցիալ-դեմոկրատական տրամագրութուններից: Իրա հետևանքով տրոցկիզմը զարձակ ինտերնացիոնալ մի դրոշայն բոլոր բացահայտ, բայց ժամանակավորապես դիմակավորված ուղիղ տրոցկիստանների համար, վորոնք գտնվում էին կոմիտեերնի շարքերում: Բայց հենց այդ էլ ոգնեց կոմիտեերնի ստատական Ինտերնացիոնալին սրբել իր շարքերից բավականաչափ ուղիղ տրոցկիստական փաստ ուղեղներ:

Դեռ ավելի կարևոր է այն, վոր տրոցկիզմի դեմ մղված այս պայքարում կոմիտեերնը կարողացավ սրել իր գաղափարական զենքը և ավելի բարձրացնել լեհիստանի գաղափարական դրոշը միջազգային պրոլետարիատի ամենալայն զանգվածների աչքում:

Կոնգրեսսը ցույց տվեց, վոր տրոցկիզմը մերկացված է կոմիտեերնի ստատական կուսակցութունների շարքերում մինչև վերջ: Տրոցկու բոլոր փորձերը՝ դիմել Վ կոնգրեսսին զանազան հալտարութուններով՝ սկսած կոմիտեերնի ծրագրի նախագծի քննադատութունից և Համկուլուսի (բ) քաղաքականութեան դեմ նոր հարձակումներ գործելուց մինչև նրա խնդիրքը՝ վերագրվել իրեն կոմիտեերնի Ինտերնացիոնալի շարքերը, չէին կարող և չկարողացան վոչ մի համակրանք առաջ բերել, վորովհետև Տրոցկին և այս անգամ շարունակում էր դեռ խորացնել իր հին սխալները և դրանով ապացույցեց միայն, վոր նա վերջնականապես խզել է իր կապերը կոմիտեերնի հետ:

Հասկանալի չի նաև այն, վոր կոնգրեսսը մերժեց տրոցկիստանների այն բոլոր ըողորբարկումները, վոր արել էին նրանք կոմիտեերնի նախկին վորոշումների նկատմամբ:

Այդ չի նշանակում, վոր կոմիտեերնի ստատական Ինտերնացիոնալն այլևս առիթ չի ունենա պատահելու տրոցկիստական տրամադրութունների մնացորդների հետ նաև հետագայում: Համկուլուսը (բ) պետք է հաշվի առնի այդ և տվյալ շրջանում, մի շրջան, չեբը ինդուստրացման կուրսի արագ կիրառումը չի կարող չհանդիպել հսկայական տնտեսական դժվարութունների և դասակարգային պայքարի ժամանակակից սրմանը չիր-

կրում: Ուստի և մենք ալժամ ել պարտավոր ենք սիստեմատիկ գաղափարական պայքար մղել տրոցկիզմի մնացորդների և նոր զիզգագների դեմ: Կոմիւնստերն Վորոշուհները դեժ քաշեցին Կոմմունիստական Ինտերնացիոնալի զարգացման այդ փուլի տակ, մի փուլ, վորն զգալի չափով կապված եր Կոմիւնստերն շարքերում յիզած տրոցկիստական վտանգի հաղթահարման հետ: Կոմիւնստերնը տրոցկիստական տարրերից մաքրելու հետ միասին, — տարրեր, վորոնց ազդեցութունը սովորաբար փոքրիկ խմբերի սահմաններից այն կողմ չեր անցնում, — Կոմմունիստական Ինտերնացիոնալը հանձինս Վ Կոնգրեսսի իր շարքերի մեջ մտցրեց չոթ նոր սեկցիա: Կոմմունիստական Ինտերնացիոնալին միացան Կուբայի, Կորեայի, Նոր Զելանդիայի, Պարագվայի կոմկուսակցութունները, Իրլանդական բանվորական լիգան, Եկվադորի սոցիալիստական կուսակցութունը և Կոլումբիայի հեղափոխական-սոցիալիստական կուսակցութունը: Այդ սեկցիաների մտնելը Կոմիւնստերնի շարքերը՝ համաշխարհային կոմմունիզմի աճման կարևոր նշաններից մեկն է:

## 2. ԳԼԵԱՎՈՐ ԳԻԾԸ՝ ԱՁ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ

Վորոնք են Կոմիւնստերնի քաղաքական գծի բնորոշ կողմերն ալժամյան պայմաններում, տրոցկիզմի քայքայումից հետո: Ինչո՞ւն է կայանում իրեն Կոմմունիստական Ինտերնացիոնալի շարքերում մղելիք գաղափարական պայքարի վլխավոր գիծը ներկայումս և առաջիկա շրջանում: Ի՞նչն է այդ մտքով կոնգրեսսի վորոշումներում հիմնականը:

Այդ հարցերին միանգամայն պարզ ու շատ կա-

րևոր պատասխան է տալիս Վ Կոնգրեսսի հիմնական բանաձևը:

Նկատի առնելով, վոր կապիտալիզմի մասնակի կաշուենացման շարունակվելու պայմաններում, կոմմունիստական կուսակցութունների տանձին շերտերի վրա չի կարող իր ազդեցութունը չունենալ սոցիալ-դեմոկրատիան՝ հանձինս իր զանազան ձևափոխութունների, Վ Կոնգրեսսն ընդգծեց կոմմունիստական կուսակցութունների շարքերում յիզած աջ վտանգի դեմ պայքարելու անհրաժեշտութունը: Իրոք, մենք բավականաչափ հիմք ունենք չմոռանալու սոցիալ-դեմոկրատիայի ուժը բանվոր դասակարգի շարքերում: Սոցիալ-դեմոկրատիայի այդ ուժն արտահայտվում է վոչ միայն նրանով, վոր միլիոնավոր բանվորներ զեռ շարունակում են պարլամենտական ընտրութուններին ձայն տալ «սոցիալիստներին»: Սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական ազդեցութունը մուտք է գործում — յերբեմն բավական նկատելի չափերով — նաև կոմմունիստական կուսակցութունների շարքերը: Մենք չենք կարող անտես առնել նաև այն փաստը, վոր կոմմունիստական կուսակցութունները շատ գործիչներ դուրս են չեկել սոցիալ-դեմոկրատիայի շարքերից: Այդ, մասնավորապես, չերևում է ընկ. Պյատնիցկու դեկուցումից, վոր նա արել է մանդատային հանձնաժողովի կողմից, և վորը չերեկ հրատարակեց, վորովհետև այդ դեկուցման մեջ նշված է, վոր նույնիսկ Վ Կոնգրեսսի պատգամավորների 30<sup>0</sup>/օ-ն անցյալում պատկանել է սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցութուններին (չհաշված ՌՄԴԲԿ): Մենք պետք է հիշենք այդ մասին, մանավանդ այն դեպքերում, չերբ մենք գործ ու-

նենք այնպիսի կուսակցություններն հետ, վորոնք զեռ չեն անցել խոշոր հեղափոխական փորձություններն միջով: Այսպես, որինակ՝ Յեվրոպայի ամենամեծաթիվ կոմունիստական կուսակցության՝ Չեխո-Սլովակիայի կոմունիստական կուսակցության՝ զրությունը այդ մտքով զգալապես տարբերվում է այնպիսի կուսակցության զրությունից, վորպիսին է Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը, վոր վերջին տասնմյակում անցել է մի շարք խոշորագույն հեղափոխական անցքերի բովով: Այդ փաստը չին կարող հաշվել չառնել թե իրենք՝ Չեխո-Սլովակիայի կոմունիստները, և թե ամբողջ կոմիստերն:

Նկատի առնելով այդ ամենը, կարելի չէ հեշտությամբ հասկանալ, թե ինչու այժմյան պայմաններում ՚՛ կոնգրեսսն անհրաժեշտ գտավ, վոր զրեթե բոլոր կոմունիստական կուսակցություններն ուժեղացնեն իրենց պայքարն ու պայքարունիստական թեքումների դեմ: Այդ հոսանքների դեմ պայքարելու անհրաժեշտությունն ընդգծված է թե Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության վերաբերմամբ և թե Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի և այլ կոմունիստական կուսակցությունների վերաբերմամբ: Այստեղ էլ պետք է նշել, վոր կոնգրեսսը հավանություն տվից այն տակտիկային, վոր ուրվագծել էր կոմիստերնի գործկոմի IX պլենումը, մի տակտիկա, վորի համաձայն պետք է ուժեղացվի կոմունիստիկ պայքարը բուրժուական «բանավորական» կուսակցությունների դեմ, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատիայի դեմ, մի բան, վոր առանձնապես անհրաժեշտ էր իրագործել—և արդեն սկսել է իրագործվել, թեև վոչ առանց վորոշ դիմադրություն—

Ֆրանսիայում և Անգլիայում: Անհրաժեշտություն չկա մտնրամասն կանգ առնել կոնգրեսսի բանաձևի համապատասխան մասերի վրա: Բավական է կարգալ հիմնական բանաձևի չեղրափոխման գլխի միայն այն մասը, վորտեղ աջ թեքումների դեմ պայքարելու վերաբերյալ միտքը ձևակերպված է կոմունիստական կուսակցությունների վերաբերմամբ՝ ընդհանրապես: Այստեղ ասված է հետևյալը.

1) Ներկայումս կոմունիստական կուսակցությունների ներսում—կապիտալիզմի մասնակի կալունացման և սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության անմիջական հետևանքով—թեքումների գլխավոր գիծը՝ Բաղաճալիկ Գիծ գիրքավորումից հակված է գեպի աջ: Այդ արտահայտվում է «լեգալիզմի» մնացորդներն ալելորդ որինակատարության, գործադուլային շարժման վերաբերմամբ ցուցահանվող «խվոստիզմի», դեպի սոցիալ-դեմոկրատիան յեղած սխալ վերաբերմունքի (որինակ՝ հայտնի հակառակումն կոմիստերնի գործկոմի IX պլենումի վորոշումների՝ Ֆրանսիայում), միջազգային անցքերին վոչ բավարար չափով նշանակություն տալու և այլնի ձևով: Թ՛յգ աջ թեքումները, լերը համեմատաբար ամուր սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ գոյություն ունեն,— առանձնապես վսանգավոր են, յեվ ցրանց գեմ մղվելի պայքարը գեթ է գրվի առաջից պլանի վրա, մի հանգամանք, վոր թելագրում է սիսեմասիկ պայքար մղել ճայեվ այն հաճավողական վերաբերմունքի գեմ, վոր գոյություն ունի գեպի աջ հոսանքները՝ կոմունիստական կուսակցությունների ներսում: Սակայն զրա հետ միասին կան ճայեվ «ձախ» թեքումներ, վորոնք արտահայտ-

վում են միասնական ֆրոնտի տակտիկան ժխտելու հայտնի տենդենցի, արհմիութենական աշխատանքի հսկայական նշանակությունը չհասկանալու, հեղափոխական ֆրազների քաղաքականությունը և — Չինաստանում — ապոտամբական տենդենցների ձևով»<sup>1</sup>:

Մեղքերված քաղվածքից չերևում է, վոր VI կոնգրեսը նշում է նաև «ձախ» տենդենցների առկայությունը, մանավանդ չինական կոմկուստիկցություն մեջ: Սակայն կոնգրեսը գլխավորապես շեշտում է աջ թեքումների դեմ մղվելիք պայքարի անհրաժեշտությունը, ինչպես նաև կոմկուսակցությունների ներսում չեղած աջ հոսանքների վերաբերմամբ արտահայտվող հաշտվողական տենդենցների հաղթահարման անհրաժեշտությունը: Աջ տենդենցների և նրանց վերաբերմամբ չեղած հաշտվողականության դեմ պայքարելու այդ միտքն ընդգծված է կոնգրեսի հիմնական բանաձև-վում և հատկապես լիզրոպական ամենագլխավոր կուսակցության՝ Գերմանիայի կոմկուսակցության վերաբերմամբ: Ահա այս է կոմիտեի վորոշման հիմնական գիծը ներկուսակցական զարգացման վերաբերմամբ առաջիկա ամբողջ շրջանի համար:

**3. ԿՈՆԳՐԵՍՍԸ՝ ԽՍՀՄ-Ի ՅԵՎ ՀԱՍԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՄԱՍԻՆ: ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՔՆՆԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՁՈՒՆԳԸ**

Առանձնապես պետք է նշել կոնգրեսի վորոշումը ԽՍՀՄ-ի և Համկոմկուսի (բ) մասին:

Կոմմունիստական Ինտերնացիոնալն ընդհանուր

<sup>1</sup> Ընդգծումներն իմն. են: — Վ. Մ.

հավանություն տվեց Խորհրդային Միության սոցիալիստական զարգացման արդյունքներին և ճիշտ համարեց կուսակցական և մասնավորապես XV համագումարի վորոշումներում գծված հետագա քաղաքական հեռանկարները: Կոնգրեսը լիովին հավանություն տվեց Համկոմկուսի (բ) կիրառած պայքարին ընդդեմ ուղղվելիք, վորի միջուկը տրոցկիզմն էր, ինչպես նաև լիակատար համերաշխություն արտահայտեց հեղափոխական անհրաժեշտությունից բղխող այն միջոցների նկատմամբ, վորոնք գործադրվել են ուղղվելիքների նկատմամբ: Կոնգրեսի պատգամային լիզերների վերաբերմամբ: Կոնգրեսի պատգամային լիզերների մեջ մտնում էին կոնգրեսի ներկա գտնվող բոլոր կուսակցությունների պատգամավորները — արված հատուկ հայտարարություններում կոնգրեսը հավանություն տվեց մեր կուսակցության վարած քաղաքականության: Կոնգրեսի պատգամավորությունների այդ հայտարարություններն արժանի չեն Խորհրդային Միության բանվորների և բանվորակիցների հատուկ ուշադրության:

Յեվ, վերջապես, կոմմունիստական Ինտերնացիոնալում կիրառվող ինքնաքննադատության մասին, ինչպես այդ արտահայտությունն գտավ VI կոնգրեսի աշխատանքներում:

VI կոնգրեսան ավելի վճռականությամբ, քան չերբերից առաջ, նշեց այն բոլոր թերությունները, վոր կան թե առանձին կոմմունիստական կուսակցությունների աշխատանքի մեջ և թե իրեն. գործադիր կոմիտեյի աշխատանքի մեջ: Ներկա շրջանում՝ գալիք դասակարգային վիթխարի կռիվների համար նախապատրաստվե-



մտքով, վոր անհրաժեշտ և «վճռականապես փոխել կուսակցութեան գիծը՝ բանվորներին կուսակցութեան ղեկավար զիրքերում առաջ քաշելու իմաստով»: Յեկրոպայի միշարք խոշորագույն կոմմունիստական կուսակցութեանններում, Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի կոմկուսակցութեանների նման սեկցիաների գլուխ են կանգնած արդեն բավական աչքի ընկնող գործիչներ, վոր դուրս են յեկել պրոլետարիատի միջից: Անկասկած, բանվորական մասսաներին սոցիալ-դեմոկրատիայի ազդեցութեանից դուրս բերելու և մեր կողմը գրավելու համար հսկայական նշանակութեան կունենա այն, վոր մենք հետզհետե ավելի ու ավելի առաջ քաշենք կոմկուսակցութեանների ղեկավար մարմիններում բանվոր-առաջնորդների, վորոնք փորձված ու չեփված են հեղափոխական պայքարի բովում և անքակտելի կապերով կապված են մասսաների հետ: Ընդամին այդպիսի բանվոր-առաջնորդների առաջ նմանապես պետք է զրված լինի իրենց տեսական պատրաստականութեանն ամեն կերպ խորացնելու խնդիրը:

Անհրաժեշտ է նաև կանգ առնել մի կարևոր որինակի վրա՝ բնութագրելու համար առանձին կոմմունիստական կուսակցութեանների դրութեանը: Այդպիսի որինակ կարող է ծառայել Լեհաստանի կոմկուսակցութեան դրութեանը: Վորչափ դատարկ խոսակցութեան չեն հանդիսանում մեր այն պնդումները, թե լեհական ռադմաշունչ Փաշիզմն առանձին վտանգ է ներկայացնում խաղաղութեան պահպանման գործի համար, նույնչափ Լեհաստանի կոմկուսակցութեան դրութեանը պետք է արժանանա կոմիստերնի հատուկ ու-

շաղրութեան: Մինչդեռ այդտեղ ստեղծվել է միանգամայն անհանդուրժելի մի կացութեան՝ կոմմունիզմի շահերի տեսակետից: Ներկայումս ունենալով արմատական սկզբունքային տարածայնութեաններ, կուսակցութեանը գրեթե փաստացի պառակտման առաջ է կանգնած, համարյա թե բաժանվել է չերկու հավասար մասերի, վորոնք փոխադարձ անհաշտելի պայքար են մղում: Յեկ չնայած այն բանին, վոր կոմիստերնի գործկոմը միայն վերջերս վորոշում ընդունեց կուսակցութեան ղեկավար մարմինների կիրառած գծի ճշտութեան մասին, կուսակցութեանը քայքայող ֆրակցիոն պայքարը վոչ միայն չի դադարել, այլև հասել է ծայրահեղ չափերի: Այսպիսի դրութեամբ և մանավանդ նկատի առնելով այն փաստը, վոր կոմիստերնը հավանութեան է տվել կուսակցութեան կիրառած քաղաքական գծին, լեհական կոմկուսակցութեան համար կենտրոնական խնդիր է հանդիսանում՝ իսկական պրոլետարական, իսկական բայլելիկյան դիսցիպլինա վերականգնելը ամեն տեսակի ֆրակցիոնականութեան հաղթահարելու և կուսակցութեան բոլոր մասերը նրա ղեկավար մարմիններին յենթարկելու հիմունքով: Վ՛ր կոնգրեսը հանձնարարեց կոմիստերնի Գործկոմին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ամենամոտ ժամանակում լեհական կոմկուսակցութեան ներքին դրութեան մեջ այդ ուղղութեամբ վճռական բեկում կատարվի:

Վերջապես, մոտենալով իր աշխատանքին ինքնաբնապատուութեան տեսակետով, կոմմունիստական ինտերնացիոնալը նշեց ևս մեկ ընդհանուր թերութեան կոմկուսակցութեանների աշխատանքի մեջ: Այդ թերութեանն արտահայտվում է այն մոմենտներին, չերք-

անհրաժեշտ են բանվոր դասակարգի ինտերնացիոնալ չելույթները: Կոնգրեսսը նշեց, վոր մի շարք դեպքերում, չեբբ Կոմմունիստական Ինտերնացիոնալի առաջ կանգնում է ին՝ կոմմունիստական կուսակցութունների միասնական չելույթի խնդիրները միջազգային կյանքում կատարվող խոշոր անցքերի առթիվ (որինակ՝ իմպերիալիստական նոր պատերազմների վտանգի դեմ պայքարելու, չինական հեղափոխության պաշտպանության ընդհանուր և մասնավորապես հանքագործների գործադուլը Անգլիայում պաշտպանելու համար և այլն), ապա համապատասխան ինտերնացիոնալ քաղաքական կամպանիաները մեծ թուլութուն ցուցահանեցին կոմկուսակցութունների աշխատանքի մեջ: Մինչդեռ միջազգային ամբողջ կացութունը թելադրում է մեզ՝ ամեն կերպ ուժեղացնել բանվոր դասակարգի չելույթների իրական միջազգայնութունը:

Զխոսելով այլևս այն մասին, վոր Կոմմունիստական Ինտերնացիոնալը, մանավանդ ծրագիր ընդունելով, ամբողջ լրջությամբ իր առաջ դրել է համաշխարհային պրոլետարական դիկտատուրա հաստատելու պայքարի խնդիրները, ընթացիկ մոմենտի առանձնահատկութունները միջազգային հարաբերութունների զարգացման մեջ—հարաբերութուններ, վորոնք հետըհետե ավելի ու ավելի ակտուալ են դարձնում նոր իմպերիալիստական պատերազմների խնդիրը—ստիպում են ավելի վճռականությամբ առաջ մղել բանվոր դասակարգի ինտերնացիոնալ չելույթների խնդիրը: Հաշվի առնելով այդ գրութունը՝ Վ կոնգրեսսը, հենց ամենից առաջ նկատի առնելով իմպերիալիստական նոր պատերազմների վտանգի դեմ պայքարելու խնդիրները,

հավանութուն տվեց այսպես կոչված Միջազգային կարմիր ու կազմակերպելու գաղափարին: Զնշանակելով առաջիկ վորևե մի վորոշ ժամկետ, կոնգրեսսը նշեց, վոր Միջազգային կարմիր ուրը պետք է կապված լինի այն պայքարի հետ, վորը մղվում է իմպերիալիստական պատերազմների վտանգի և կապիտալի կողմից բանվոր դասակարգի վրա կատարվող հարձակումները դեմ, իսկաշտպանութունը ՍՍՀՄ-ի և գաղութների ազատագրական պայքարի: Այդ «որվա» կիրառումը պետք է իրենից ներկայացնի զանազան չերկրների բանվորների մի ցույց հեղափոխական-պրոլետարական պայքարի դրոշի տակ: Միանգամայն հնարավոր է և այն, վոր Միջազգային կարմիր ուրվան նախորդեն մի շարք պրոլետարական համերաշխ չելույթներ չերկրների առանձին գրուպպաներում: Բանվորների նման ինտերնացիոնալ չելույթները մեծ նշանակութուն կունենան պրոլետարիատի միջազգային հեղափոխական վճռական ճակատամարտի նախապատրաստման գործում: Դրա համար բավականաչափ առիթներ կլինեն մեր դարաշրջանում, մի դարաշրջան, չեբբ կապիտալը կատարի հարձակումներ է գործում բանվոր դասակարգի դեմ, չեբբ գաղութներում ուժեղանում է իմպերիալիզմի ճնշումը, չեբբ ՍՍՀՄ-ի դեմ իմպերիալիստական հարձակում գործելու նախապատրաստական լայն աշխատանքներ են ծավալվում: Զանազան չերկրների բանվորների այդ չելույթները պետք է լայն մասսաների առաջ ավելի սուր կերպով դնեն բանվոր դասակարգի միջազգային քաղաքականության խնդիրները: Միջազգային պրոլետարիատն սկսելով առանձին ինտերնացիոնալ չելույթներից, պետք է հասնի այն ինտերնա-

ցիոնալ պայքարին, վորը մղվելու յե կոմմունիստական Խնտերնացիոնալի ծրագրի իրագործման, համաշխարհային պրոլետարական դիկտատուրայի, համաշխարհային կոմմունիզմի հաղթանակի համար: (Ծափահարութիւն):



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|   |       |
|---|-------|
| I. Կոմմունիզմի ծրագիրը յեվ հեռանկարները   | 7—25  |
| 1. Ծրագիրը ընդունելու նշանակությունը  | 7     |
| 2. Ծրագրի հիմնական գաղափարը   | 12    |
| 3. Կոմմունիզմը և սոցիալիստական ռեֆորմիզմը   | 19    |
| II. Միջազգային գրուքյունը յեվ Կոմինսերնի խնդիրները . . . . . 25—39  |       |
| 1. Յերեք պատմաշրջան և ընթացիկ մոմենտը   | 25    |
| 2. Կապիտալիզմի հակասությունները և միջազգային քաղաքականությունը . . . . .  | 30    |
| 3. Պատերազմի և գաղութային խնդիրները կոնգրեսում: Պայքար մասսաների համար և պայքար սոցիալ-դեմոկրատիայի դեմ . . . . . | 35    |
| III. Կոմինսերնը յեվ նրա ֆաղափական գիծը  | 39—54 |
| 1. Կոմինտերնի միասնականությունը և պայքար արոցկիզմի դեմ . . . . .  | 39    |
| 2. Կլիսավոր գիծը՝ աջ թեքումների դեմ . . . . .   | 42    |
| 3. Կոնգրեսը՝ ԽՍՀՄ-ի և Համկոմկուսի (բ) մասին: Կոմինտերնը և ինքնաբննադատության լուրջնգը . . . . .                   | 46    |

ՀՀ Ազգային գրադարան



NL0187174



ԳԻՆՆ Ե 15 4.